

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2 (առաջին մաս)

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի և Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության անդամների ընտրության Ընտրական հանձնաժողովի 2010թ. մայիսի 18-ին կայացած նիստի

Նիստին ներկա էին ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի (ՇԽ) և Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության անդամների ընտրության Ընտրական հանձնաժողովի նախագահ **Արտակ Մարիբեկյանը**, Ընտրական հանձնաժողովի քարտուղար **Մարիաննա Եղիազարյանը**, Ընտրական հանձնաժողովի անդամներ՝

Համազասպ Դանիելյանը, Գայանե Արսենյանը, Վահագն Ասրյանը, Մարիամ Օսիպյանը, Լիլիթ Քամայանը, Ամալյա Բալաբեկյանը, Անահիտ Հակոբյանը, Գայանե Գևորգյանը, Խաչատուր Բարսեղյանը, Տաթևիկ Ավագյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝

Էսթեր Հակոբյանը՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի համակարգման ղեկավար,

Վիկտորյա Գրիգորյանը՝ ՇԽ օգնական:

Նիստից բացակայում էր Տիգրան Շահինյանը: ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը տեղեկացրեց, որ հեռախոսազրույցի ընթացքում Տ. Շահինյանից տեղեկացել է, որ նա ինքնաբացարկ է հայտնում իր անդամությունից:

Առաջարկություն եղավ ուղիղ հեռախոսակապով լսել Տ. Շահինյանի ինքնաբացարկի մասին: Հանձնաժողովի նախագահի կողմից հեռախոսային կապ հաստատելուց հետո Տ. Շահինյանը հայտնեց, որ ինքնաբացարկ է ներկայացնում ԸՀ անդամությունից մի շարք պատճառներից ելնելով: Քննարկում ծավալվեց Տ. Շահինյանի ինքնաբացարկի ընդունման վերաբերյալ: Մ. Եղիազարյանը նշեց, որ ԸՀ իրավասու չէ ընդունելու անդամներից որևէ մեկի ինքնաբացարկը, և դա ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ-ի իրավասությունն է: ՇԽ օգնականը նշեց, որ ընտրակարգով չի սահմանվում անդամների ինքնաբացարկի ընդունման ընթացակարգը և առաջարկեց, որ ԸՀ քննարկի և իր դիրքորոշումը արտահայտի դրա վերաբերյալ: Առաջարկություն եղավ քվեարկության դնել Տ. Շահինյանի ինքնաբացարկի ընդունման հարցը՝ հաշվի առնելով, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը ներկա և անհրաժեշտության պարագայում կհավաստիացնի զործընթացի վերաբերյալ: Վերոնշյալ հարցը դրվեց քվեարկության և 11 կողմ, 1 դեմ, 0 ձեռնպահ ձայներով այն հաստատվեց:

Նիստը շարունակվեց 12 անդամներից կազմաված Ընտրական հանձնաժողովի կազմով: Սակայն, թույլենք անց, ինքնաբացարկ հայտնեց նաև Ընտրական հանձնաժողովի անդամ Համազասպ Դանիելյանը: Նա իր որոշումը պարզաբանեց Հանձնաժողովի ոչ արդյունավետ աշխատանքի ընթացքով: Հ. Դանիելյանի ինքնաբացարկը դրվեց քվեարկության և հաստատվեց՝ 11 կողմ, 0 դեմ և 1 ձեռնպահ ձայներով:

Այսպիսով, Ընտրական հանձնաժողովը այդ պահից բաղկացած է 11 անդամներից՝ ԸՀ նախագահ **Արտակ Մարիբեկյան**, ԸՀ քարտուղար **Մարիաննա Եղիազարյան**, անդամներ **Գայանե Արսենյան**, **Վահագն Ասրյան**, **Մարիամ Օսիպյան**, **Լիլիթ Քամայան**, **Ամալյա Բալաբեկյան**, **Անահիտ Հակոբյան**, **Գայանե Գևորգյան**, **Խաչատուր Բարսեղյան**, **Տաթևիկ Ավագյան**:

Նախ քննարկվեց ընտրական հանձնաժողովի քարտուղարի կողմից մշակված՝ նիստի օրակարգի նախնական տարբերակը: Քննարկման արդյունքում օրակարգը լրամշակվեց, և ընտրական հանձնաժողովի անդամների կողմից հաստատվեց նիստի օրակարգի վերջնական տարբերակը, որը ներկայացվում է ստորև՝

Օրակարգ

ՀՄՀ-Հայաստան Հիմնադրամ ՊՈԱԿ-ի Շահառուների խորհրդի ընտրությունների
 Ընտրական հանձնաժողովի նիստի
 18.05.2010թ.

Հ/Հ	Քննարկվելիք հարց	Կատարող	Ժամ
1.	Գործունեության պլանի մշակում	Ընտրական հանձնաժողովի անդամներ	17:00
2.	Կանոնակարգային հարցերի քննարկում և մշակում	Ընտրական հանձնաժողովի անդամներ	17.20-18.00
3.	Ներկայացված հայտերի տվյալների նախնական ամփոփում	Ընտրական հանձնաժողովի անդամներ	18.00-18.30
4.	Ներկայացված վավեր հայտերի, թերի հայտերի և առաջադրված թեկնածուների հայտերի քննարկում և հաստատում	Ընտրական հանձնաժողովի անդամներ	18.30-18.50
5.	Ներկայացված հայտերի տվյալների վերջնական ամփոփում	Ընտրական հանձնաժողովի անդամներ	18.50-19.30
6.	Ընթացիկ հարցեր	Ընտրական հանձնաժողովի անդամներ	19.30-20.20

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ ՇԽ օգնականը և ներկայացրեց մայիսի 21-ի՝ որպես ընտրությունների նախորդող օրվա և 22-ի՝ բուն ընտրության օրերին ԸՀ անդամներից պահանջվող մասնակցությունը: Վ. Գրիգորյանը մասնավորապես նշեց, որ երկու օրերի ընթացքում բոլոր անդամների մասնակցությունը պարտադիր է:

ԸՀ գործունեության պլանի վերաբերյալ քննարկվեցին մի շարք հարցեր, մասնավորապես - մայիսի 21-ին սահմանվեց գրաֆիկ, համաձայն որի ԸՀ անդամները ներկա կգտնվեն քվեաթերթիկների բազմացմանը, կստորագրեն դրանք, ինչպես նաև կմասնակցեն թեկնածուների համար սահմանված ստորագրմանը՝ ժամը 15:00-16:00-ն:

Այսպիսով, սահմանվեց հետևյալ գրաֆիկը.

09:30-ին՝ Արտակ Մարիբեկյան, Ամալյա Բալաբեկյան, Վահագն Ասրյան, Անահիտ Հակոբյան, Մարիաննա Եղիազարյան

15:00-ին՝ Տաթևիկ Ավագյան, Մարիամ Օսիպյան, Խաչատուր Բարսեղյան, Լիլիթ Քամալյան, Գայանե Արսենյան, Գայանե Գևորգյան:

- ընտրության ժամանակ դերերի բաշխում և ընդհանուր դասավորվածություն. որոշվեց, որ ԸՀ նախագահը և մի շարք անդամներ կմասնակցեն դահլիճի դասավորության գործընթացին:
- քննարկվեց մայիսի 22-ի ընդհանուր օրակարգը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ.

Առաջարկություն եղավ հաջորդիվ հարցով դիտարկել թերի հայտերը և դրանց ուղղությամբ ԸՀ-ի կողմից իրականացված գործողությունները:

Այս հարցի կապակցությամբ հանդես եկավ ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը: Նա նշեց, որ հեռախոսով կապվել է մի շարք հայտատուներ հետ, որոնց հայտերում առկա էին թերություններ և որոնց ԸՀ նախագահի պնդմամբ պատշաճ տեղեկացվել է: Հեռախոսազանգերի արդյունքում պարզվել է, որ նրանցից շատերը (մեծ մասը) տեղեկացված չեն եղել իրենց հայտերի թերի լինելու վերաբերյալ: Եղել են նաև այնպիսի հայտեր, որտեղ կոնտակտային տվյալները բացակայում էին: Մրանցից մի մասի կոնտակտները գտնվել են ՇԽ նախորդ տարիների ընտրությանը մասնակիցների ցանկերի միջոցով: ՇԽ օգնականը նշեց, որ թերի հայտերից մի մեծ խումբ Գյումրի քաղաքից է, և ԸՀ նախագահը առաջարկել է Գյումրին ներկայացնող մասնակցին կոորդինացնի հայտերի լրացնելու գործընթացը: Ա. Սարիբեկյանը որոշ անձանց ապատեղեկացված լինելը բացատրեց այն հանգամանքով, որ ինքը զանգահարել է այն անձանց, ում հայտերն արդեն առանձնացված են եղել: Հնարավոր է, որ աշխատանքային օրվա ավարտին առանձնացվել են նաև այլ մմանատիպ հայտատուների հայտեր, ում հետ ՇԽ օգնականը կապ է հաստատել հաջորդ օրն առավոտյան:

Ա. Սարիբեկյանը արտահայտվեց նաև թերի հայտերի վերաբերյալ: Նա, մասնավորապես, առանձնացրեց հայտերի մեջ տեղ գտած թերությունների մի քանի խումբ: Դրանցից ամենատարածվածը 1.3 կետն է (կազմակերպության գրացման ամսաթիվը սխալ է նշված՝ չի համապատասխանում վկայականի պատճենին):

Նախագահողն առաջարկեց 1.3 կետին չհամապատասխանող հայտերը համարել մեխանիկական բնույթի և հաստատել դրանք:

Առաջարկությունը դրվեց քվեարկության և հաստատվեց 10 կողմ և 1 ձեռնպահ ձայներով: Հայտերի վերաբերյալ արտահայտվեց ԸՀ անդամ Լ. Քամայանը: Նա նշեց, որ իր դիտարկման արդյունքում հայտնաբերել է, որ կան մի քանի դեպքեր, երբ միևնույն անձը հանդիսանում է երկու և ավելի կազմակերպությունների նախագահ և/կամ ղեկավար անձ: Որպես օրինակ, Լ. Քամայանը նշեց, «Համայնքային նախաձեռնությունների և քարոզչության կենտրոն» ՀԿ-ն (կազմակերպության լիազոր անձը հանդիսանում է ԸՀ անդամ Գ. Գևորգյանը՝ լիազորված Մ. Չաղոյանի կողմից) և «Գյումրու Մաշտոցի դպրոց» ՀԿ-ն (կազմակերպության ղեկավար Մ. Չաղոյանը թեկնածության հայտ է ներկայացրել) ղեկավարվում է միևնույն անձ Մարգարետունի Չաղոյանի կողմից: Լ. Քամայանը նշեց, որ այս մոտեցման ընդունումը չի ապահովում ընտրության հավասար պայմաններ և խախտվում մեկ ձայնի սկզբունքը: Նա կոչ արեց և առաջարկեց նման դեպքերում հաստատել միայն թեկնածուի հայտը, իսկ մյուսների մասնակցությունը արգելել՝ հիմք ընդունելով նրանց և թեկնածուի փոխկապվածությունը:

Այս հարցի վերաբերյալ արտահայտվեցին նաև մյուս անդամները՝

Տ. Ավագյանը նշեց, որ սույն առաջարկով իրենք կզրկեն մյուս ՀԿ-ներին մասնակցության իրավունքից, որը ճիշտ չի համարում:

Խ. Բարսեղյանը նույնպես դեմ էր այս առաջարկությանը. նա դա բացատրեց այն հանգամանքով, որ նախագահը չի որոշում կազմակերպության դիրքորոշումը, այլ ՀԿ խորհուրդը:

Լ. Քամայանի վերոնշյալ առաջարկությանը դեմ էին նաև նախագահն ու քարուղարը:

Մ. Եղիազարյանը կարծիք հայտնեց, որ նկարագրված դեպքերում մեկ ձայնի իրավունքը չի խախտվում: Մեկ ձայնի սկզբունքը կխախտվի, եթե ԸՀ-ն, առաջնորդվի ֆիզիկական անձերի սկզբունքով, մասնակցության իրավունքից զրկի համապատասխան ՀԿ-ին: Մ. Եղիազարյանը իր պնդումը հիմնավորեց նաև նրանով, որ ընտրություններին մասնակցում են ՀԿ-ները, այլ ոչ ֆիզիկական անձինք:

Ա. Հակոբյանը նշեց, որ այն անձինք, ում ներդրումը քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման գործում ավելի մեծ է, համապատասխանաբար, ավելի մեծ պետք է լինեն իր հնարադրությունները:

ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը իր ելույթում մասնավորապես նշեց, որ Լ. Քամայանի տեսակետը նույնպես համարում է շահերի բախում, որը ի դեպ Մ. Չադոյանի դեպքում շատ ավելի արտահայտված և անընդունելի է, քանի որ Մ. Չադոյանի կողմից ղեկավարած կազմակերպության ներկայացուցիչը հանդիսանում է նաև ԸՀ անդամ: Իսկ Ընտրակարգով ԸՀ անդամին ներկայացնող կազմակերպությունից այլ ներկայացուցիչ չի կարող հանդես գալ որպես թեկնածու: Մյուս դեպքերը ոչ ուղղակի, բայց նույնպես համարեց շահերի բախում:

Ամփոփելով քննարկումները՝ նախագահն առաջարկությունը դրեց քվեարկության առաջին հարցը:

Այն է՝ եթե կան տվյալներ, որ միևնույն անձը մեկ կազմակերպության նախագահ է, իսկ մյուսում ղեկավար պաշտոն է զբաղեցնում, արդյո՞ք այդ որևէ կազմակերպություններն էլ կարող են մասնակցել ընտրություններին.

Կողմ՝ 7 ձայն,
Դեմ՝ 2 ձայն ,
Չեռնալահ՝ 1 ձայն

Այսպիսով, վերոշարադրյալ հարցը հաստատվեց:

Լիլիթ Քամայանի հայտարարությունը ներկայացվում է կից:

Քվեարկության դրվեց հետևյալ հարցը. Հայտի 2.4 (կոնտակտային տվյալներ) կետի լրացված չլինելու դեպքում հայտը համարել վավեր.

Կողմ՝ 10 ձայն,
Դեմ՝ 1 ձայն:

Այսպիսով, հայտի 2.4 կետի լրացված չլինելու դեպքում հայտը համարվում է վավեր:

Քվեարկության դրվեց հետևյալ հարցը. Հայտի 1.6 (կազմակերպության գործունեության ոլորտները) կետի լրացված չլինելու դեպքում հայտը համարել վավեր, եթե այդ հայտով անձը հանդիսանում է ընտրող.

Կողմ՝ 10 ձայն,
Դեմ՝ 1 ձայն:

Այսպիսով, որպես ընտրող առաջադրվելու վերաբերյալ հայտի 1.6 կետի լրացված չլինելու դեպքում հայտը համարվում է վավեր:

Օրակարգի երրորդ կետի վերաբերյալ.

Հայտերի ամփոփում՝

Առկա էին 220 վավեր հայտ, 18 ուղղված հայտ և 32 թերի հայտ:

Օրակարգի չորրորդ կետի վերաբերյալ.

Ներկայացված հայտերի տվյալներն ուսումնասիրելուց հետո քվեարկության դրվեց «Պարտադիր զինծառայություն անցած սպաների միություն» ՀԿ-ի հայտի մերժման հարցը. հիմքերը՝ հայտին կցված չէր գրանցման վկայականը, ինչի վերաբերյալ ներկայացվել էր դիմում, Հարցի վերաբերյալ արտահայտվեց Լ. Քամայանը և նշեց, որ վկայականի բացակայության պարագայում անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան տեղեկանք:

Կողմ՝ 9,

Դեմ՝ 1,


Ձեռնպահ՝ 1:

Այսպիսով, այդ «Պարտադիր զինծառայություն անցած սպաների միություն» ՀԿ-ի կողմից ներկայացված հայտը մերժվեց:

Նիստը որոշվեց շարունակել հաջորդ օրը՝ մայիսի 19-ին, ժամը 16:30-ին:


Ընտրական հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Մարիբեկյան



Ընտրական հանձնաժողովի քարտուղար՝

Մարիաննա Եղիազարյան



ԸՀ անդամներ՝

Վահագն Ասրյան

Գայանե Գևորգյան

Մարիամ Օսիպյան

Խաչատուր Բարսեղյան

Անայա Բաղաբեկյան

Գայանե Արսենյան

Անահիտ Հակոբյան

Տաթևիկ Ավագյան

Լիլիթ Քամայան

